Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

870

203.7
U-22

1891

203.7
ນ-22

2010

2037
15-22

# ԵՐԳՔ ՀՈԳԵՒՈՐՔ

ՀԱՄԱՀԱՒԱՔԵԱԼՔ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐՈՑ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ի ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ԵՐԳԵՑՈՂԱՑ
ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ։

ԽՄԲԱԳՐԵԱՑ

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՀԱՅՈՑ
ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ։

80
0-ՄԱ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ԻՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1891 — ՌՅԽ

# ՀԱՄԱՀԱՒԱՔԵԱԼՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐՈՑ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ի ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ԵՐԳԵՑՈՂԱՑ
ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ։

ԽՄԲԱԳՐԵԱՑ

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ
ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI - 1922
имени А. Мясникяна
ԱՆՎԱՆ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1891 — ՌՅԽ

Պարգևատուն «Նոր-Դար» լրագրի խմբագրի[ն] [illegible] Աստուածատուր «Աստուածատուրեանին» [illegible]

18 16/II 92 [illegible]

Երևան.

ՀՐԱՄԱՆԱՒ

ՍԻՆՈԴԻ

ՍՐԲՈՑ Է.ՋՄԻԱԾՆԻ

32302-Վ.Կ. 20 01

15242-58

## ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Համաձայն մեր ծխական և հոգևոր ուսումնարանների կանոնադրութեան և ծրագրի, պարտաւոր է ամէն մի աշակերտի և աշակերտուհու՝ սովորել և իմանալ նաև եկեղեցական երգեցողութիւն, որը իբրև արուեստ (ձայնագրութիւն) սկսւում է հազիւ առաջին դասարանից, այն ևս ոչ օրիորդաց, այլ միայն տղայոց ուսումնարաններում: Բայց ի նկատի ունենալով որ մինչև այդ արուեստի սկիզբը և աշակերտների նոյն արուեստում փոքր ի շատէ զարգանալը՝ տարիներ են հարկաւոր, դարձեալ անհրաժեշտ է նրանց սովորել եկեղեցական երգեցողութիւն՝ դորա համար՝ իբր օժանդակ միջոց՝ կազմեցի այն փոքրիկ եկեղեցական երգարանը, որի մասին՝ աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել:

Մանուկներին բերանացի սովորցնել՝ և կամ ստիպել որ նոքա մտապահեն աւանդածը, եթէ ոչ անհնարին՝ կարելի է ասել աւելի քան դժուար է. ուրեմն մնում է միակ միջոց արտագրել տալ՝ կամ թելադրել նրանց՝ նոր անցնելի կամ արդէն անցած նիւթը. իսկ թէ այդ միջո-

ցով էլ ո՞րքան դժուար է նպատակին հասնելը, այդ աւելի շուտ կհասկանայ իւրաքանչիւր մի բանիմաց ուսուցիչ՝ որը ունի կամ ունեցել է գործ փոքր աշակերտների հետ։ Բաւական է յիշել որ նախ՝ արտագրել տալով՝ աշակերտները ժամանակաճառ են լինում, այն ինչ՝ նոքա կարող էին այդ միջոցում իրենց մտաւոր զարգացման նպաստող այլ և այլ առարկաներով զբաղել: Երկրորդ՝ գրութեան ժամանակ զանազան աղաւաղութիւններ են առաջ գալիս, որովհետև՝ նոքա ձգտում և աշխատումեն որքան կարելի է շուտ գրել և շուտով ազատուիլ այդպիսի մի ձանձրալի աշխատութիւնից՝ որպիսին է արտագրութիւնը. այդպիսով էլ անտարակոյս նոքա տգեղացնումեն իրանց գործը, սխալներով զարդարում տետրակները և նորից սրբագրութեան համար մի նոր աշխատանքի դուռ բացանում:

Ուստի՝ մասամբ հայ մանուկներին օգնելու, նրանց գործը հեշտացնելու և սխալներից ազատ պահելու նպատակով՝ փութացայ կազմել այն փոքրիկ եկեղեցական երգարանը. բայց թէ ո՞րքան ինձ յաջողուեց հասնել իմ նպատակին, այդ թողնումեմ՝ ընթերցող հասարակու-



թեան անաչառութեանը, որը ի նկատի ունենալով վերոյիշեալ օգուտները, ներողամիտ կգտնուի ձեռնարկութեանս թերութիւններին։

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ։

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

# ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

(Յառաջ քան զպատարագն է ճաշու ժամուն)։

Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ. ամէն։

ՍԱՂՄՈՍ Ծ.

Ողորմեա ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո և յաղթեսցես ի դատել քում։

Անօրէնութեամբ յղացայ և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:

Ցողեա՛ զիս մշակաւ և սուրբ եղէց, լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա՛ ինձ տէր զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ Աստուած, Աստուած փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում:

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցա-



նէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի արա՛ տէր կամօք քովք Սիօնի և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

Փառք Հօր և Որդւոյ և:

Դկ. Օրհնեմք զքեզ, Հայր անսկիզբն, էից էակ ի յանգոյից, բարձեր ձեռօք նիւթ ի հողոյ և ստեղծեր մարդ ի պատկեր քո, գլուխն ոտից խոնարհեցաւ զի զպատուիրան քո՝ մոռացաւ, դարձեալ ասեմք ըստ անառակին թէ Հայր մեղայ քեզ ի յերկինս:

Երկնաւորացն անքննելի, եղեր մարդկան տեսանելի, զգեցար պատկեր հողեղինի, պատկերըդ Հօր անփոփոխելի, ելեր յերրորդ ժամ ի խաչին, վասն Ադամայ նախաստեղծին, ընդ աւազակին քում խաչակցին, արժանացո՛ զմեզ դրախտին:

Թագաւոր Թագաւորաց, առատաբաշխ Հո-

զի շնորհաց, ժողովելոյն ի վերնատանն, առաքելոյն երկոտասան, ի հրոյ լեզուս երևեցար յօգնիս նոցա վերանոտար. լո՛ւր յանուն քո ժողովելոցս, էջ և առ մեզ յերրորդ ժամուս:

Մաղթ. Ցամենայն ժամու աղաչանք իմ այս են: և այն բոլոր կարգին և յաւարտին երգեսցեն տաղերգն զԽորհուրդ Խորին:

## Ի ԶԳԵՍՏԱՒՈՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻ:

Դպ. Խորհուրդ խորին անհաս անսկիզբն,
Որ զարդարեցեր զվերին պետութիւնդ,
Ի յառագաստ անմատոյց լուսոյն
Գերապանծ փառօք զդասս հրեղինաց:

Անճառահրաշ զօրութեամբ
Ստեղծեր զԱդամ պատկեր տիրական,
Եւ նազելի փառօք զգեստաւորեցեր
Ի դրախտն Եդենի տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո սուրբ Միածնիդ
Նորոգեցան արարածք ամենայն:
Եւ վերստին մարդն անմահացեալ
Զարդարեցաւ ի զգեստ անկողոպտելի:



Անձրևածին բաժակ հրաշօտ
Որ հեղար յառաքեալսն ի սուրբ վերնատանն,
Հեղ և ի մեզ Հոգիդ Սուրբ Աստուած
Ընդ պատմուճանիս զքո զիմաստութիւն:

Տան քում վայելէ սրբութիւն
Որ զգեցար զվայելչութիւն,
Սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ
Պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո
Տարածեցեր ընդդէմ աստեղաց,
Հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ
Համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել:

Իւսմամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս և զզգայարանս
Խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարոնի,
Ծաղկեալ յակեթել ի զարդ խորանին:

Բազկաց բոլորից տիրապէս աստուածպետական
Նախորտապատ սկրով զմեզ զգեստաւորեցեր
Քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր
Զեկեղեցի քո անշարժ պահեա
Եւ զերկրպագուս անուանդ քում
Պահեա ի խաղաղութեան:

Քհ.—Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնի:

Սրկ.—Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր, ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քհ.—Ընկալ տէր զաղաչանս մեր: Ասա տէր, Խոստովանիմ Առաջի Աստուծոյ: Մերձակայ ժողովրդեանն ասէ, Ողորմեսցի քեզ: Ինքն ասէ, Ազատեսցէ և զձեզ մար:

Դպ.—Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Քհ.—Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Սաղմ. ՂԹ. Աշխարհ... Աշխարհեցէք առ տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի Նորա ցնծութեամբ ծաներուք զի Նա է տէր Աստուած մեր:



Նա արար զմեզ և ոչ մեք էաք մեք ժողովուրդք և խաշն արօտի Նորա:

Մտէք ընդ դրունս Նորա խոստովանութեամբ և օրհնութեամբ ի յարկս Նորա:

Խոստովան եղերուք Տեառն և օրհնեցէք զանուն Նորա:

Քաղցր է տէր՝ յաւիտեան է ողորմութիւն Նորա յազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն Նորա:

Փառք Հօր և:

Սրկ.—Սուրբ եկեղեցւոյս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քհ.—Ի մէջ տաճարիս և առաջի: Ասասցէ և ընթերցող սաղմոսն. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրկ.—Դատ արա ինձ Աստուած և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Քհ.—Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս:

Սրկ.—Դու Աստուած հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Բհ.—Առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո:

Սրկ.—Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Բհ.—Խոստովան եղեց քեզ օրհնութեամբ՝ Աստուած Աստուած իմ:

Սրկ.—Արդ՛ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս, յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Բհ.—Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Սրկ.—Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն: Օրհնեսցուք զԱմենակալն Աստուած՝ զհայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջ փառաբանութեան և երգել զերգս հոգևորս. Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛:

Բհ.—Ի յարկի սրբութեան և . . . :

---



Եւ ապա յետն զՀարագոյն և դպիրքն երգեսցեն Շարական՝ ըստ աւուրն պատշաճի, և ի ճաշու Հարագործութեան երգեսցեն.

Դպ.—Բարեխօսութեամբ մօր քո և կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէիցս: Որ զերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քո Քրիստոս. և ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց և մարգարէից սուրբ վարդապետաց: Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի քո տէր յօրինակ ըստ հնումն Զաքարիայ, ընկալ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զՆոյի և զԱբրահամու: Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա՛ զԱթոռ Հայկազնեայցս:

Ի Տրագալուցի Ծննդեան և Յարութեան երեկոյին՝ յընթերցմանն Մարգ. Դանիէլի:

Դպ.—Օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Սրկ.—Օրհնեա տէր.
Քհ.—Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և . . . :

Ժամամուտ Ս. Զատկին, նոյն այլեւ ընդ առաւօտուն պատարագին:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Մահուամբ զմահ կոխեաց.
Եւ յարութեամբն իւրով
Մեզ զկեանս պարգեւեաց,
Նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սրկ.—Եւ ես խաղաղութեան զտէր: Օրհնեա տէր:
Քհ.—Օրհնութիւն և փառք: Խաղաղութիւն:
Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում:
Սրկ.—Աստուծոյ երկրպագեսցուք:
Դպ.—Առաջի քո տէր:
Քհ.—Տէր Աստուած մեր որոյ կարողու.
Դպ.—Ճաշու փոխն և շարականն ըստ պատշաճի:

Ճշ. Ս. Զատկին:

Աջ. Գովեա Երուսաղէմ զտէր.
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա.
Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն ալէ-
լուիա.



փառք Հօր:
Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա,
Որ զաշխարհս լուսաւորեաց ալէլուիա:

Սրկ.—Օրհնեա տէր.
Քհ.—Զի քո է կարողութիւն և զօրու.
Սրկ.—Պռօսխումէ:
Դպ.—Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց ողորմեա մեզ: (Կրկնեա երիցս:)
Սրկ.—Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք:
Դպ.—Տէր ողորմեա:
Սրկ.—Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զտէր աղաչեսցուք.
Դպ.—Տէր ողորմեա:
Սրկ.—Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զտէր աղաչեսցուք:
Դպ.—Տէր ողորմեա:
Սրկ.—Վասն Հայրապետին մերոյ Տեառն (այս անուն) կենաց և փրկութեան հոգւոյ նորին, զտէր աղաչեսցուք:
Դպ.—Տէր ողորմեա:
Սրկ.—Վասն վարդապետաց, քահանայից, սարկա-

ւադաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զտէր աղաչեսցուք:

Դպ.—Տէր ողորմեա:

Սրկ.—Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զտէր աղաչեսցուք:

Դպ.—Յիշեա տէր և ողորմեա:

Սրկ.—Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զտէր աղաչեսցուք:

Դպ.—Տէր ողորմեա:

Սրկ.—Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք:

Դպ.—Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սրկ.—Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենքեան միաբանութեամբ:

Դպ.—Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա:

Սրկ.—Օրհնեա տէր:

Քհ.—Զի ողորմած և մարդասէր ես:

---



## Ընթերցուածք Գրոց և Աւետարան ըստ պատշաճի աւուրն:

Սրկ.—Ալէլուիա օրթի:

Քհ.—Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ.—Երկիւղածութեամբ լուարուք:

Դպ.—Փառք քեզ տէր Աստուած մեր:

Սրկ.—Պռօսխումէ:

Դպ.—Ասէ Աստուած:

## Աւետարանն ըստ պատշաճի:

Դպ.—Փառք քեզ տէր Աստուած մեր:

Սրկ.—Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից: Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մար-

դացաւ ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։ Որով էառ զմարմին զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ի սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն, և բնակեցաւ ի սուրբսն։ Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի. կամ՝ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ՝ յոչնչէ եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին. և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ առաքելական եկեղեցի։

Սրկ.—Օրհնեա տէր։



Քհ.—Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և.

Սրկ.—Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ և ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման և աղօթից։ Զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց։ Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց. թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր։ Աղօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան Նորա։ Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդարութեան վաստակիլ ի գործս բարիս։ Զի զողորմութեան զշնորհսն իւր արասցէ ի վերայ մեր՝ տէր ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ.—Կեցո տէր։

Սրկ.—Զժամ սուրբ պատարագիս և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի տեառնէ խնդրեսցուք։

Դպ —Շնորհեա տէր։

Սրկ.—Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի տեառնէ խնդր։

Դպ.—Շնորհեա տէր:

Սրկ.—Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մե-
րոց ի տեառնէ խնդր:

Դպ.—Շնորհեա տէր:

Սրկ.—Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւն յօգ-
նութիւն անձանց մերոց ի տեառնէ խնդր:

Դպ.—Շնորհեա տէր:

Սրկ.—Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հա-
ւատոյս մերոյ զտէր աղաչեսցուք:

Դպ.—Տէր ողորմեա:

Սրկ.—Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ
ամենակալին յանձն արասցուք:

Դպ.—Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սրկ.—Ողորմեաց մեզ, տէր Աստուած մեր, ըստ մեծի
ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան
միաբանութեամբ:

Դպ.—Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ո-
ղորմեա:

Սրկ.—Օրհնեա տէր.

Քհ.—Որպէսզի արժանաւոր: Խաղաղութիւն

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ.—Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ.—Առաջի քո տէր:



Քհ.—Խաղաղութեամբ քով Քրիստոս:

Սրկ.—Օրհնեա տէր:

Քհ.—Տէր Աստուած օրհնեսցէ զամե:

Սրկ.—Մի ոք յերախայից, մի ոք ի թերահաւա-
տից, և մի ոք յապաշխարողաց, և յանմաքրից
մերձեսցի յաստուածային խորհուրդս:

Դպ.—Մարմին տէրունական, և արիւն փրկչա-
կան, կայ առաջի, երկնային զօրութիւնքն
յաներևոյթս, երգեն և ասեն անհան-
գիստ բարբառով, սուրբ, սուրբ, սուրբ,
տէր զօրութեանց:

Սրկ.—Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ,
դպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգս հո-
գևոր:

15242-58

ԾՆՆԴԵԱՆ, ԱՒԵՏԵԱՑ, ՎԱՐԴԱՎԱՌԻ և
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Դպ.—Բազմութիւնք հրեշտակաց, և զօրաց
երկնաւորաց, իջեալ ի յերկնից ընդ միա-
ծին թագաւորին: Որք խմբովին երգէին
և ասէին սա է Որդին Աստուծոյ, ամենե-
քեան ասասցուք, ուրախ լերուք երկինք
և ցնծասցեն հիմունք աշխարհի: Զի Աս-
տուածն յաւիտենական ի յերկրի երե-

ւեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ, զի կե-
ցուսցէ զանձինս մեր։

### Մեծի հինգշաբթի։

Որ վերայ նստիս ի կառս հրանիւթս քաւ-
ռակերպեանս, անճառելի Բանդ Աստ-
ուած։ Այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն
քո արարածոցս, յանձն առեր բազմիլ
ընդ աշակերտսն։ Եւ սերովբէքն և քե-
րովբէքն հիացեալ զարմանային, և պե-
տութիւնք վերին զօրացն զքանչացեալ
աղաղակէին ասելով, սուրբ, սուրբ, սուրբ,
Տէր զօրութեանց։

### Յինանց և խաչի։

Ո՞վ է որպէս տէր Աստուած մեր խաչեցաւ
վասն մեր. թաղեցաւ և յարեաւ (խմբովին)
հաւատարիմ՝ եղև յաշխարհի և համբար-
ձաւ փառօք։ Եկայք ժողովուրդք, զօրհ-
նութիւն ընդ հրեշտակս երգեսցուք նմա
ասելով, սուրբ, սուրբ, սուրբ ես տէր
Աստուած մեր։

---



### Կիւրակէի, Եկեղեցւոյ, Ծաղկազարդի և Հրեշտակաց։

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր
Աստուած, զքո սուրբ զեկեղեցի։ Հազարք
(խմբովին) հազարաց հրեշտակապետք կան
առաջի քո։ Եւ բիւրք բիւրուց հրեշտակք
պաշտեն զքեզ տէր, և ի մարդկանէ հա-
ճեցար ընդունել զօրհնութիւն։ Զայնիւ
խորհրդականաւ, սուրբ, սուրբ, սուրբ,
Տէր զօրութեանց։

### Պահոց. Ննջեցելոց։

Վասն յիշատակի հանգուցելոյն ընկալ
Հայր սուրբ մարդասէր զպատարագս։ Եւ
(խմբովին) համարեա զհոգիս նոցա, ի թիւ
սրբոց քոց յարքայութեանդ երկնից։ Մա-
նաւանդ՝ զի հաւատով մատուցաք զպա-
տարագս. հաշտեսցի Աստուածութիւնդ,
և հանգուսցէ զհոգիս նոցա։

### Մարտիրոսաց։

Սրբութիւն սրբոց մեծ ես և ահաւոր։ Եւ
զինուորութիւնք հրեշտակացն (խմբովին)

օրհնեն զքեզ և ասեն. փառք ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն:

Մեղեդի. Առաքելոց և Հայրապետաց:

Ամենակալ ես Տէր զօրութեանց, որ թագաւորդ ես յաւիտենից: Որ նախ յերկնից ի յերկինս և լոյս ծագես յարարածս քո: (խմբովին) Որ խնամարհութեամբ իջեր ի յերկիր, քեզ պատարագս մատուցանեմք: Եւ սուրբ զմնունդ քո փառաւորեմք. Տէր՝ որ պսակիչդ ես քոց սրբոց (այս անուն): Վասն զի սքա են մեզ բարեխօս, Տէր ամենակալ, ի քում յարքայութեանդ:

Սրկ.—Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք:

Դպ.—Տէր ողորմեա:

Սրկ.—Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ. Մի խղճիւ և գայթակղութեամբ, մի նենգութեամբ, խորամանկութեամբ. մի պատրանօք և խաբէութեամբ: Մի երկմտութեամբ և մի թերահաւատութեամբ. այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով: Լցեալ սիրով լի և առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յա-



ղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, և գտցուք զողորմութեան զշնորհս: Յաւուր յայտնութեան և ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. կեցուսցէ և ողորմեսցի.

Դպ.—կեցո Տէր և ողորմեա:

Սրկ.—Օրհնեա Տէր:

Քհ.—Շնորհօք և մարդա: Խաղաղութիւն:

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում

Սրկ.—Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ.—Առաջի քո Տէր:

Սրկ.—Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան և որք ոչ էք կարօղք հաղորդիլ աստուածային խորհրդոյս առ դրունս ելէք և աղօթեցէք.

Դպ.—Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած աստ բազմեցաւ: Խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տուաւ: Եկեղեցիս մի անձն եղև, համբոյրս յօդ լրման տուաւ: Թշնամութիւնն հեռացաւ, սէրն յընդհանուրս սփռեցաւ: Արդ՝ պաշտօնեայք բարձեալ զձայն, տուք զօրհնութիւն ի մի բերան, միասնական աստուածութեանն որում սրովբէքն են սրբաբան:

Սրկ.—Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք և նայեցարուք զգուշութեամբ։

Դպ.—Առ քեզ Աստուած։

Սրկ.—Պատարագ Քրիստոս մատչի գառն Աստուծոյ։

Դպ.—Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Շնորհք՝ սէր և աստուածային սրբա։

Դպ.—Ամէն․ և ընդ հոգւոյդ քում։

Սրկ.—Ըզդրունս, զդրունս, ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ․ ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ։

Դպ.—Ունիմք առ քեզ Տէր ամենակալ։

Սրկ.—Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ։

Դպ.—Արժան և իրաւ։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Եւ ընդ սերովբէսն և ընդ քերով։

Դպ.—Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց։ Լի են երկինք և երկիր փառօք քո․ օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ Տեառն․ ովսաննա ի բարձունս։

Սրկ.—Օրհնեա Տէր։



Քհ.—Առէք կերէք այս է մարմին իմ, որ։

Դպ.—Ամէն։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է։

Դպ.—Ամէն։ Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր պարտապան պարտեաց մերոց․ հեղմամբ արեան նորա աղաչեմք զքեզ ողորմեա քո բանաւոր հօտի։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Եւ զքոյս ի քոյոց՝ քեզ մատուց։

Դպ.—Յամենայնի օրհնեալ ես Տէր, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.—Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ.—Առաջի քո Տէր։ Որդի Աստուծոյ, որ պատարագեալ հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ, հեղմամբ արեան քո սուրբ, աղաչեմք զքեզ ողորմեա արեամբ քով փրկեալ հօտի։

Սրկ. — Օրհնեա Տէր:

Ժղ. — Որպէս զի եղիցի սա ամենեցուն:

Դպ. — Հոգի Աստուծոյ, որ զփառակցի քո զխորհուրդ, իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս մեր, հեղմամբ արեան սորա աղաչեմք զքեզ հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոցն:

Սրկ. — Օրհնեա Տէր:

Ժղ. — Ընդ որս և մեզ այց արասցես բա:

Դպ. — Յիշեա Տէր և ողորմեա:

Ժղ. — Աստուածածնին սրբոյ կուսին բա:

Դպ. — Յիշեա Տէր և ողորմեա:

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն կանգնեալ ասասցէ:

Սրկ. — Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, և ամենայն հայրապետաց սրբոց: Առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, և ամենայն սրբոց: Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս՝ աղաչեմք:

Դպ. — Յիշեա Տէր և ողորմեա:

---



Յարութեան կիւրակէից զայս ասա:

Սրկ. — Օրհնեալ գովեալ և փառաւորեալ՝ հրաշալի և աստուածազարդ յարութեանն Քրիստոսի երկրպագանեմք:

Դպ. — Փառք յարութեան քո Տէր:

Ի տօնի սրբոց զայս ասա:

Սրկ. — Սուրբ և Աստուածահաճոյ (մարգարէին, հայրապետին, առաքելոյն, մարտիրոսին), (այ անուն). որոյ այսօր զյիշատակն կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս՝ աղաչեմք:

Դպ. — Յիշեա Տէր և ողորմեա:

Սրկ. — Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն, և Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի և Խադայ, Մեսրոբայ վարդապետին և Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն, Յօհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի և Մովսիսի Տաթևացեացն, և սրբոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց՝ հովուաց և հովուապետացն Հայաստանեայց, եղիցի յիշա:

Դպ. — Յիշեա Տէր և ողորմեա:

Սրկ․—Միանձնացելոց սրբոց՝ առաքինասէր և աստուածուսոյց կրօնաւորացն, Պօղոսի, Անտօնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, Աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ։ Յօհաննիսեանց և Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց և Սուքիասեանց. և ամենայն սրբոց՝ հարց և աշակերտելոց նոցին ընդ տիեզերս. եղիցի յիշատակ ի սուրբ պատ․

Դպ․—Յիշեա Տէր և ողորմեա։

Սրկ․—Թագաւորաց հաւատացելոց սրբոց՝ Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ և Թէոդոսից. և ամենայն սուրբ և բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց. եղիցի յիշա․

Դպ․—Յիշեա Տէր և ողորմեա։

Սրկ․—Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն. եղիցի յիշատակ։

Դպ․—Յիշեա Տէր և ողորմեա։

Սրկ․—Օրհնեա Տէր։

Քհ․—Եւս առաւել զեպիսկոպոսապետն։

Սրկ․—Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զի սա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեսցէ։ Սովաւ շնորհեա զսէր,



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека им. А. Мясникяна
7/IV 1922
1005
20183

զհաստատութիւն և զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն Հայոց Տեառն (այս անուն) և քահանայից որ զպատարագս մատուցանէ։ Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց։ Եւս առաւել վասն հանգուցեալ բարունապետացն մերոց և շինողաց սրբոյ եկեղեցւոյս, և որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ։ Ազատութիւն եղբարց մերոց գերելոց և շնորհ առաջիկայ ժողովրդեանս։ Հանդիստ հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն, եղիցի յիշատակ ի։

Դպ․—Բստ ամենայնի, և յաղագս ամենեցուն։

Սրկ․—Օրհնեա Տէր։

Քհ․—Եւ եղիցի ողորմութիւն մեծին Աստ։

Դպ․—Ամէն և ընդ հոգւոյդ քում։

Սրկ․—Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դպ․—Տէր ողորմեա։

Սրկ․—Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք, ևս առաւելապէս զՏէր աղաչ։

Դպ․—Տէր ողորմեա։

Սրկ․—Վասն մատուցեալ սուրբ և աստուածային պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս. զՏէր աղաչ։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Որպէսզի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ, երկնային և յիմանալի իւր մատուցարանն, փոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգևս Հոգւոյն սրբոյ. զՏէր աղաչ։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Ընկալ կեցո և ողորմեա, և պահեա զմեզ Տէր քոյին շնորհիւդ։

Դպ.—Կեցո Տէր և ողորմեա։

Սրկ.—Զամենասուրբուհի զԱստուածածինն զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով. զտէր աղաչ։

Դպ.—Յիշեա Տէր և ողորմեա։

Սրկ.—Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զտէր աղաչ։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք։

Դպ.—Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Սրկ.—Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենքեան միաբանութեամբ։



Դպ.—Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Եւ տուր մեզ համարձակաձայն։

Դպ.—Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Զի քո է արքայութիւն։ Խաղաղութիւ։

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.—Աստուծոյ Երկրպագեսցուք։

Դպ.—Առաջի քո Տէր։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Քրիստոսիւ, Յիսուսիւ տերամբ։

Սրկ.—Պռօսխումէ։

Քհ.—Ի սրբութիւն սրբոց։

Դպ.—Միայն սուրբ, միայն տէր. (խմբովին) Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն։

Սրկ. — Օրհնեա տէր:

Քհ. — Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:

Դպ. — Ամէն:

Սրկ. — Օրհնեա տէր:

Քհ. — Օրհնեալ Որդին սուրբ Աստուած ճշ:

Դպ. — Ամէն:

Սրկ. — Օրհնեա տէր:

Քհ. — Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշ:

Դպ. — Ամէն:

Սրկ. — Օրհնեա տէր:

Քհ. — Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ:

Դպ. — Ամէն. Հայր սուրբ, Որդին սուրբ, Հոգին սուրբ: (Խոնարհին) Օրհնութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. — Օրհնեա տէր:

Քհ. — Ի սուրբ ի սուրբ պատուական մարմ: Դառնայ առ ժողովուրդն և օրհնէ խաչակնքէ ի վերայ նոցա և դառնալով ի սուրբ սեղանն, ծածկեն զվարագոյրն և երգեսցեն տէր ողորմեա:

Սրկ. — Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա:

Դպ. — Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա:

Քհ. — Ամենասուրբ Երրորդութիւն,
Տուր աշխարհիս խաղաղութիւն.



Դպ. — Եւ հիւանդաց բժշկութիւն
Եւ ննջելոց ապաշխութիւն:

Սրկ. — Արի Աստուած հարցն մերոց
Որ ապաւէնդ՝ ես ննջելոց:

Դպ. — Հաս յօգնութիւն ծառայից քոց:
Անօգնական Ազգիս Հայոց:

Սրկ. — Տէր ողորմեա, տէր ողորմեա:

Դպ. — Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա:

Սրկ. — Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ՝ դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս: Զի սմա վայելեն սաղմոսք և օրհնութիւնք, ալէլուք և երգք հոգևորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք և զՏէր յերկինս օրհնեցէք:

Դպ. — Օրհնեալ է Աստուած: Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա:
Զմարմին իւր տայ մեզ կերակուր և սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ. ալէլուիա:
Մատիք առ Տէր և առէք զլոյս. ալէլուիա:
Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր. ալէլուիա:
Օրհնեցէք զՏէր յերկինս. ալէլուիա:
Օրհնեցէք զնա ի բարձունս. ալէլուիա:

Օրհնեցէք զՆա, ամենայն հրեշտակք Նորա. ալէլուիա:

Օրհնեցէք զՆա, ամենայն զօրութիւնք Նորա. ալէլուիա:

Քարոզէն ղեկավարողն յետոյ:

Սրկ.—Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք.

Դպ.—Աստուած մեր և տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Իսկ ի հաղորդելն ժողովրդեան, ասացէ սարկաւագն:

Սրկ.—Հաւատամք Հայր սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ, խոստովանիմք և հաւատամք, զի սա է ճշմարիտ, կենդանի և կենդանարար պատուական մարմին և արիւն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ բաշխի զմեղս աշխարհի.

Եւ դպիրքն երգեսցեն «Որ կազմեցեր» և կամ «Այսօր անճառ»:

Դպ.—Որ կազմեցեր սեղան խորհրդոյ, և արբուցեր յանմահական բաժակէն, որբոց քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատունն. աղաչեմք Փրկիչ ողորմեա:



Մաքրեա զմիտս և զխորհուրդս զի և մեք հաղորդեսցուք որբութեամբ, ընդ որբոց քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատունն. աղաչեմք զՔեզ:

Եւ յառաջնորդն առ քահանայն:

ԲՀ.—Կեցո տէր զժողովուրդս քո և օրհնեա:

Դարձեալ քարոզէն ղեկավարողն և դպիրքն երգեն:

Դպ.—Լցաք ի բարութեանց Քոց, Տէր, ճաշակելով զմարմին քո և զարիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ հանապազ կերակրես զմեզ, առաքեա ի մեզ զհոգևոր քո զօրհնութիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Սրկ.—Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք.

Դպ.—Տէր ողորմեա:

Սրկ.—Եւ ևս հաւատով ընկալեալք յաստուածային սուրբ, երկնային, անմահ, անարատ, անապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք.

Դպ.—Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քո: Բաշխելով զմարմինդ և զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց:

Քարոզէն վերադարձին:

Սրկ.— Օրհնեա տէր:

Քհ.— Որ օրհնես զայնոսիկ որք:

Դպ.— Օրհնեալ է Աստուած:

Քհ.— Կեցո՛ զժողովուրդս քո:

Դպ.— Ամէն:

Քհ.— Սրբեա զսոսա:

Դպ.— Ամէն:

Քհ.— Խաղաղութիւն:

Դպ.— Ամէն:

Քհ.— Զի ամենայն տուրք:

Դպ.— Ամէն. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան (երիցս) և եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան:

Քհ.— Կատարումն օրինաց և մարգարէից:

Սրկ.— Օրթի:

Քհ.— Խաղաղութիւն:

Դպ.— Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ.— Երկիւղածութեամբ լուարուք:

Դպ.— Փառք քեզ տէր Աստուած մեր:

Սրկ.— Պռօսխումէ:

Դպ.— Ասէ Աստուած:



Սրկ.— Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա:

Քհ.— Պահպանիչ և յոյս հաւատ..:

Սրկ.— Օրհնեցից զՏէր յամենայն յամենայն ժամ, ժամ օրհնութիւն Նորա ի բերան իմ:

Քհ.— Օրհնեալք եղերուք:

## ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՔ

## ԳԻՇԵՐԱՅԻՆ:

Ա. Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա՛:

Բ. Բղխումն ի Հօրէ,
Բղխեա՛ ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս:

Գ. Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտող զիս արա՛:

Դուռն ողորմութեան,
Դասանողիս բաց,
Դասեցո՛ վերնոցն:

Ե. Երրեակ միութիւն,
Եղելոյ խնամող,
Եւ ինձ ողորմեա՛:

Զարթիր, Տէր յօգնել,
Զարթո՛ զթմրեալս
Զուարթնոց նմանիլ:

Է. Էդ Հայր անսկիզբն,

Էակից Որդի,
Է միշտ Սուրբ Հոգի։
Ընկա՛լ զիս, գթած,
Ընկալ, Ողորմած,
Ընկալ, Մարդասէր։

Ե. Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ զյանցանս։
Ժողովող բարեաց,
Ժողովեա և զիս,
Ժողովս անդրանկաց։

Զ. Ի քէն, Տէր, հայցեմ
Ի Մարդասիրէդ
Ինձ բժշկութիւն։
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս։

Է. Խորհրդոց գիտող։
Խաւարիս շնորհեա,
Խորհուրդ լուսաւոր։
Ծնունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ,
Ծագեա զլոյս փառաց։

Ը. Կենարար փրկիչ,
Կեցո զմեռեալս,
Կանգնեա զգլորեալս։
Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով։

Թ. Ձայնիւս աղաչեմ,
Ձեռօքս պաղատեմ,
Ձիր բարեաց շնորհեա։
Ղամբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո։

Ժ. Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեպել ի յերկինս։
Միածինդ Հօր,
Մոյծ զիս յաւագաստ,
Մաքուր հարսանեացդ։

ԺԱ. Յորժամ գաս փառօք,
Յահագին աւուրն



Յիշեա զիս, Քրիստոս։
Նորոգող հնութեանց,
Նորոգեա և զիս,
Նորոգ զարդարեա։

ԺԲ. Շնորհատու բա-
րեաց,
Շնորհեա զքաւութիւն
Շնորհեա զթողութիւն։
Ուրախացո, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Որ վասն եմ ի սուգ։

ԺԳ. Չար մշակողին,
Չար սերմանց նորին,
Չորացո զոստուղն։
Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեա իմոց,
Պարտեաց թողութիւն։

ԺԴ. Ջուր շնորհեա ա-
չացս,
Ջերմ հեղուլ զարտասուր,
Ջնջել զյանցանս։
Ռետինդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ։

ԺԵ. Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճմլեա,
Սիրտ իմ քարեղէն։
Վասն գթութեան,
Վասն ողորմութեան,
Վերստին կեցո։

ԺԶ. Տենչալւոյդ աւե-
լեամբ,
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս։
Րաբունդ երկնաւոր
Րոտեա զաշակերտս,
Րամից երկնայնոց։

ԺԷ. Ցօղ արեանքդ, Տէր,
Ցօղեա ի հոգիս,
Ցնծասցէ անձն իմ։
Իւծեալս մեղօք,
Իւծեալ աղաչեմ
Իւսել ինձ բարիս։

ԺԸ. Փրկիչ բոլորից,

փութա՛ զիս փրկել   Քաւեա՛ զօրհնաբանս,
փորձութեանց մեղաց։   Քեզ երգել զփառս։
Քաւիչ յանցանաց,

ԺԹ. Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ։

Յիշեա՛, Տէր և ողորմեա՛։

---

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր, օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկրպագանեմք քեզ, փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ։ Տէր և Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և սուրբ Որդի, Տէր Աստուած գառն Աստուծոյ և Որդի Հօր, որ առեր զմեղս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ՝ դու միայն



բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր և Հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ Հօր, ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա Տէր, զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահել զմեզ։ Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն։ Օրհնեալ Տէր ուսո՛ ինձ զարդարութիւնս քո. (Երիցս կրկնել․) Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես աղաչեմ Տէր ողորմեա՛ ինձ և բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։ Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո. և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել զկամս քո՝ զի դու ես Աստուած իմ։ Ի քէն է Տէր՝ աղբիւր կենդանութեան. և լուսով երեսաց քոյ տեսանեմք զլոյս։ Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ Տէր։

---

Սաղմոս յայնժամ յորժամ ներբողէ յառաջըն-թացոյ աւետարանին:

Երգեցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան:

Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն:

Երգեցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան:

Յարևելից մինչ ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն Տեառն:

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր, և յերկինս են փառք նորա:

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ, և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտառապեալս յաղբևաց:

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւոց բերկրեալ:

---



Նորաստեղծեալ բանն յանէից
Խոկմամբ զերկինս երկնից,
Եւ զերկնային զօրս անմարմնոց
Իմանալեայն զուարթնոց.
Եւ զգալի տարերց քառից
Հակառակաց միաբանից,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի:
Երեքօրրեան մի աէրութիւն,
Միով բնութեամբ Աստուածութիւն,
Լոյսն որ անեղ արարչական
Ասաց լինիլ լոյս եղական,
Զոր և ծագեաց յօրն առաջին
Միաշաբաթ կիւրակէին,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի:
Բարունօրէն բացատրեսցուք,
Զծածկեալ խորհուրդն ծանիցուք,
Զի լոյսն անտես իմանալի
Մաքուր հոգւոց տեսանելի,
Ի սոյն ծագեաց միաշաբաթ
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ.
Եկայք, փրկեալք, ընդ զուարթնոյն
Տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սէրդ սիրով խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար,
Նովին մարմնովն խաչեցար,
Ի գերեզման մահու եղար.
Այսօր յարեար աստուածաբար,
Ի հրեշտակաց քարոզեցար.
Եկայք փրկեալք, ընդ զուարթնոյն
Տուք զօրհնութիւն յարուցելոյն:

Երևեցար խնկաբերիցն
Յօղջոյն կենաց ուրախալից,
Եւ ի լերինն Գալիլեայ
Առաքելոց մետասանից,
Արժանացո զմեզ ընդ նոսին
Զքեզ տեսանել յօրն վերջին.
Եկայք, փրկեալք, ընդ զուարթնոյն
Տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սիօնի որդիք, զուարթիք,
Հարսին լուսոյ տուք աւետիք,
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ.
Գայ պսակէ զքեզ փառօք.
Ե՛լ ընդառաջ պճնեալ զարդուք.
Երգեա երգ նոր յարուցելոյն՝
Ննջելոց կենաց պտղոյն:



# ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

## Յերեկոյի ժամերգութեան.

---

### Սաղ. ՁԵ.

Խոնարհեցո Տէր զունկն քո և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես:

Պահեա զանձն իմ սուրբ Տէր, և փրկեա զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ Տէր, համբարձի զանձն իմ:

Զի դու Տէր քաղցր և ուղիղ ես, բազումողորմ առ ամենեսեան՝ որք կարդան առ քեզ:

Ունկն դի՛ր Տէր աղօթից իմոց, և նայեա ի ձայն խնդրուածաց իմոց:

Յաւուր նեղութեան իմոյ՝ կարդացի առ քեզ, և լուար ինձ:

Ոչ ոք է նման քեզ յԱստուածս Տէր, և ոչ ոք է որպէս զգործս քո:

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո, և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան:

Մեծ ես դու Տէր և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած:

Առաջնորդեա՛ ինձ ի ճանապարհի քում և և գնացից ի ճշմարտութեան քում. ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուանէ քումմէ:

Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ բոլորով սրտիւ իմով. փառաւոր արարից զանուն քո յաւիտեան:

Մեծ եղև ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր, և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց:

Աստուած, անօրէնք յարեան ի վերայ իմ և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց:

Այլ դու Տէր Աստուած իմ՝ գթած ես և ողորմած, երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ, նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ:

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո. կեցո՛ զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ՝ և ամաչեսցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ՝ և մխիթարեցեր զիս:

Փառք Հօր և Որդւոյ և.:

---



## Սաղմոս ՃԼԹ

Ապրեցո՛ զիս Տէր ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս:

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զօր ամենայն պատրաստեցան ի պատերազմ:

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա:

Պահեա՛ զիս Տէր ի ձեռաց մեղաւորի, և ի մարդոյ չարէ փրկեա զիս:

Խորհեցան խափանել զգնացս իմ: Թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ:

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շաւիղս գայթակղութիւն:

Ասացի, Տէր Աստուած իմ ես դու, ունկն դիր Տէր, ձայնի աղօթից իմոց:

Տէր Տէր զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի:

Մի՛ մատներ զիս Տէր ի ցանկութիւն մեղաւորաց, զի խորհեցան վասն իմ՝ մի՛ ընդ վայր հարկաներ զիս:

Զի մի՛ երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին. վախճան կատարածի

նոցա՝ վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա:

Արկցես ի վերայ նոցա զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնոսա. ի տառապանս մի՛ կարասցեն կեալ:

Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ի վերայ երկրի, զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ,

Ծանեայ զի առնես Տէր զդատաստանս աղքատի, և զիրաւունս տնանկի:

Արդարք գոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց:

Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ, նայեա ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ:

Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի:

Դի՛ր Տէր պահապան բերանոյ իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան:

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որք գործեն զանօրէնութիւն. և ո՛չ եղէց կցորդ ընտրելոյ նոցա:

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ, և



յանդիման արասցէ, իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամս նոցա:

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրասցին:

Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի սփռեալ է ի վերայ երկրի, ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս:

Առ քեզ Տէր Տէր են աչք իմ, ի քեզ յուսացայ՝ Տէր, մի՛ հաներ զհոգի յինէն:

Պահեա՛ զիս յորոգայթէ, որ թագուցաւ ինձ, ի գայթակղութենէ գործողին զանօրէնութիւն:

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք, միայն եմ ես մինչև անցից:

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով զՏէր աղաչեցի:

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից:

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու Տէր, ծանեար զշաւիղս իմ, ի ճանապարհ յոր և գնայի, թագուցաւ ինձ որոգայթ:

Հայէի յաջմէ և տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ:

Աղաղակեցի առ քեզ Տէր և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց:

Նայեաց Տէր յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս:

Տէր հան ի բանտէ զանձն իմ, գոհանալ զանուանէ քումմէ:

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես:

Փառք Հօր և.:

---

Ալէլուիա. ալէլուիա:

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօրն երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս:

Եկեալքս ի մտանել արեգականն, տեսաք զլոյս երեկոյիս: Օրհնեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին Աստուծոյ: Եւ ամենեքեան ասեմք ամէն: Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգոյ զանուն փառաց ամենասուրբ Երրորդութեանդ: Որ տաս կենդանութիւն, վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ:

---



Մեսեդի ներքաղամաց. ձայն յայս աւուր ըստ պատշաճի:

Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց:

Զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա:

Ուղիղ եղիցին աղօթք իմ:

Որպէս խունկ առաջի քո Տէր:

Համբարձումն ձեռաց իմոց:

Պատարագ երեկոյի:

---

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց. ողորմեա մեզ: (Երեքս կրկնես).

Յաւուր Աւետեաց, Ծննդեան և Ընծայութեան:

Սուրբ Աստուած: Որ յայտնեցար վասն մեր. ողորմեա մեզ:

Բարեկենդանաց գալստեան Քրիստոսի և Ծաղկազարդին:

Սուրբ Աստուած: Որ եկիր և գալոց ես. ողորմեա.:

Ուրբաթու մատնութեան գիշերին:

Սուրբ Աստուած: Որ մատնեցար վասն մեր, ողորմեա:

Ուրբաթու Ճաշուն՝ և ամենայն պահոց աւուրց, Խաչի և Եկեղեցւոյ, այլ և յաւուրս պահոց։

Սուրբ Աստուած։ Որ խաչեցար վասն մեր․ ողորմեա։

Ուրբաթու երեկոյին, և Շաբաթու գիշերոյն։

Սուրբ Աստուած։ Որ թաղեցար վասն մեր․ ողորմեա։

Զատկի և ամենայն յարութեան կիւրակէից։

Սուրբ Աստուած։ Որ յարեար ի մեռելոց․ ողորմեա։

Համբարձմանն Քրիստոսի

Սուրբ Աստուած։ Որ համբարձար փառօք առ Հայր․ ողորմ։

Գալստեան Հոգւոյն սրբոյ։

Սուրբ Աստուած։ Որ եկիր և հանգեար յառաքեալսն․ ողորմ։

Վարդավառին։

Սուրբ Աստուած։ Որ յայտնեցար ի Թաբոր լերինն․ ողորմ։

Փոխման սուրբ Աստուածածնին։

Սուրբ Աստուած։ Որ եկիր ի փոխումն մօր քո և կուսի․ ողորմ։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս



Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի․ մատո՛ զաղաչանս մեր Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։

---

Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

Օգնութիւն ինձ ի Տեառնէ, որ արար զերկինս և զերկիր։

Մի տար ի սասանութիւն զոտս քո․ և մի ննջեսցէ պահապան քո։

Որպէս ոչ ննջէ՝ և ոչ ի քուն երթայ պահապանն Իսրայէլի։

Տէր պահեսցէ զքեզ, և Տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով։

Արեգակն ի տուէ քեզ մի մեղիցէ, և մի լուսինն ի գիշերի։

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ․ պահեսցէ Տէր զանձն քո։

Տէր պահեսցէ զմուտ և զել քո յայսմհետէ մինչև յաւիտեան։

Փառք Հօր և Որդւոյ և։

ա՛յ. Սուրբ ես, Տէր զօրութեանց, որ բնակեալդ ես ի յերկինս և բարերանիս ի սրբոց Քոց:

Երկնային զօրութիւնք սերովբէք և քերովբէք՝ անդադար օրհնեն սուրբ զանունդ Քո:

Քահանայք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք, երկրպագեսցուք Տէրութեանդ Քո:

Նայեա, որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ առաքեցար և լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեա՛լ ես, Թագաւոր յաւիտենից:

Որ զլոյսն խոկըմանէ հաստատեցեր վերստին, և զխաւարն անգիտութեան յարութեամբդ Քո հալածեցեր. օրհնեա՛լ ես, Թագաւոր յաւիտենից:

Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս. օրհնեա՛լ ես, Թագաւոր յաւիտենից:

Երկնաքաղաքային Յովհաննէս՝ մեծն ի ծնունդս կանանց՝ քարոզէր յանապատի ազգարարող բարբառովն զծագումն լուսոյ արեգականն արդարութեան:

Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրող Որդւոյն



Աստուծոյ, յառաջընթաց կարապետ և պատմող աստուածային օրինաց, հորդէր ճանապարհս Թագաւորին յաւիտենից:

Յանօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադա, ի պարգևի մասին խնդրէր զգլուխ մարգարէին՝ շիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն: փառք Հօր:

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգևեա երկրպագուացս ամենասուրբ երրորդութեանդ զյարութիւնդ յուսոյ կենացն յաւիտենից:

Այժմ և միշտ և:

Ի փոխն ժողովրդեանց:

Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ երրորդութեանդ և զապաւինեալս ի խորան փառաց քոց պահեա անխռով ի խաղաղութեան:

Ի փոխն Հայրապետաց և Վարդապետաց:

Որ զխորհուրդս փրկականս աստուածգիտութեան, շնորհեցեր մեզ ի ձեռն քահանայապետին քո և վկային, նորին աղաչանօք խնայեա ի մեզ:

Ի քէն հայցեմք բազումողորմ, ի ձեռըն սըր-
բոյ քոյ առաքելոյն. խնայեա Տէր ի յանձինս
մեր։

Զորս ընտրեցեր յառաջգիտութեամբ զար-
ժանացելոց անձինս. տպաւորել ի նոսա
զհոգւի շնորհաց քոյ. որով վանեալ հեր-
քեցին զապստամբ թշնամին. բարեխօսու-
թեամբ սոցա, խնայեա Տէր, ի յանձինս մեր։

Որք զխաւարն անգիտութեան մերկացին յամե-
նայն ազանց զգեստաւորեալ զհեթանոսս. ա-
ռաքելական կոչմամբ ի լոյս կենացն յաւիտե-
նից, բարեխօսութեամբ սոցա խնայեա Տէր
ի յանձինս մեր։

Վասն որոյ և մեք հաւատացելոքս, կատա-
րեսցուք զյիշատակ սրբոց առաքելոյն.
աղաչեմք զքեզ, որ միայն գթած ես, ա-
ռատաձեռնեա ի մեզ զմեծ քո ողորմու-
թիւնդ, Տէր, որ կեցուցանես զամենայն
արարածս։

Փառք Հօր։

Արդ աղաչեա, մայր Աստուծոյ, զծնեալն ի քէն
վասն մեր, զի ընդ նմին պահելով, սուրբ յա-
րութեամբ նորա նորոգեսցուք, առ նա միշտ
բարեխօսեա կեցուցանել զմեզ։



Այժմ և միշտ։

Եւ համարձեալ զձայնն Յուդայի, խնդը-
րելով ի Տեառնէ զոենչալին ամենեցուն
սուրբ զխաչ. և հաւատով գոչէր, եկայք
երկրպագեսցուք Աստուածային սուրբ
նշանիս. մեծայուցանելով զծնեալն ի
կուսէն։

---

Փոխ նէ–րաշխամռէց։

Ահա օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն
զՏէր. ո՛ կայք ի տուն Տեառն, և ի գաւիթս
Աստուծոյ մերոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբու-
թիւն, և օրհնեցէք զՏէր։

Օրհնեսցէ զմեզ Տէր ի Սիօնէ, որ արար զեր-
կինս և զերկիր։

Խոստովան եղէց քեզ Տէր՝ բոլորով սրտիւ
իմով, առաջի հրեշտակաց սաղմոս ասացից
քեզ։

Զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկրպա-
գից ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց
անուան քում վասն ողորմութեան և ճշմար-
տութեան քո։

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ քո. յորում աւուր կարդամ առ քեզ, վաղվաղակի լուր ինձ. և բազում արասցես զօրութիւնս յանձն իմ:

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի, զի լուան զբանս բերանոյ քո, և օրհնեսցեն զճանապարհս քո:

Մեծ են փառք Տեառն. բարձր է Տէր, զխոնարհս տեսանէ, և զբարձունս ի հեռաստանէ ճանաչէ:

Թէ գնայցեմ ես ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս ի բարկութենէ թշնամւոյն:

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո. և Տէր հատուսցէ ընդ իմ:

Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ:

Աստուած յանուան քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ:

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց:



Ահա Աստուած օգնական իմ և Տէր ընդունող հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա:

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է:

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ի թշնամիսն իմ ետես ակն իմ:

Փառք Հօր և Որդւոյ և:

Արշակման փոխ:

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ:

Ասասցէ Տեառն՝ ընդունող իմ ես, ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ ի նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանից ի խռովութենէ:

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ի հովաթևոյ նորա յուսասցես:

Որպէս զէն շուրջ եղիցի զքև՝ ճշմարտութիւն նորա:

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ՝ որ թռչի ի տուէ:

Ցերէ որ շրջի ի խաւարի, ի դայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր։

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տէր, յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի մերձեսցին ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի երբէք հարցես զքարի զոտն քո։

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հովանի եղէց նմա. զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից. և ցուցից նմա զփրկութիւն իմ։



Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս։

Որպէս աչք ծառայի ի ձեռն Տեառն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս ի վերայ մեր։

Ողորմեա՛ մեզ Տէր, ողորմեա՛ մեզ. զի բազում լցաք արհամարհանօք։

Նա առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից։

Աստուած յանուան քում կեցո՛ զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած, լո՛ւր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վերայ իմ և հզօրք խնդրեցին զանձն իմ և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ և Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից

քեզ. և խոստովան եղէց անուան քում Տէր
զի բարի է:
Ցամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս.
և ի թշնամիսն իմ ետես ակն իմ:

Փառք Հօր և Որդւոյ և:

Կեցո՛ Տէր.
Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

ԵՐԳՔ.

Ծննդեան և Մկրտութեան Տեառն Մերոյ
Յիսուսի Քրիստոսի:

Այսօր տօն է ծննդեան, աւետիս.
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս:

Այսօր արևն արդարութեան աւետիս
Երևեցաւ ի մէջ մարդկան աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական աւետիս
Ծնաւ եբեր զանմահ արքայն աւետիս:



Գ.կ. Խորհուրդ մեծ և սքանչելի
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
Տան աւետիս աշխարհի:

Ծնաւ Նոր արքայ
Ի Բեթղեհեմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ,
Ոչ մեկնելով ի Հօր է՝
Ի սուրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ
Մեծապայծառ աւետեօք,
Եւ արարածք ամենայն
Զգեցան հանդերձ փրկութեան:

Այսօր յայրին ընծայեցաւ
Քրիստոս Որդին Աստուծոյ,
Եւ հրեղինաց բազմութիւնքն
Յերկնից յերկիր վայր իջեալ:

Այսօր հովուացն տեսեալ
Զարդարութեան արեգակն,

Եւ ընդ հրեշտակս երգէին
փառք ի բարձունս Աստուծոյ։

---

Ո՜վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ։
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ
Չառնոյր կարապետն զմկրտիլն ի յանձն։
Յորդանան լուեալ՝ փախստական դառնայր,
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր։
Գետ մի՛ զարհուրիր, քո Արարիչն եմ ես,
Եկեալ մկրտիմ՝ և լուանամ՝ զմեղս։
Յիսուս յառաջեաց աստուածութեամբ ի ջուրն,
Հանդերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ։
Երկինք պատառեալ, ձայն ի յերկնից իջեալ,
Ձայն Հօր ի բարձանց, Որդւոյն իւր վկայեալ։
Դա է իմ՝ Որդի ընդ որ հաճեցայ, ասէր,
Դմա լուարուք, որդիք մարդկան, ձայնէր։
Սուրբ Հոգին իջեալ աղաւնակերպ տեսլեամբ,



Յայտնեալ ցուցանէր Հօր փառակից զՈրդին։
Արդ օրհնեալ է Հայր և համագոյ Որդին,
Հոգւոյն ճշմարտի փառք յաւիտեանս ամէն։

---

Այսօր ձայնըն հայրական յերկնից իջեալ հաճոյական,
Սիրեցելոյ Որդւոյ վկայ, ո՜վ յորդորէ, գետ յորդորէ գետ Յորդանան·
Յորդորական ձայնիւ երգէր մեծ կարապետն Յովհաննէս։
Այսօր երկիրս երկինք եղեն, երևելով Աստուածորդւոյն,
Սիրով եկեալ ի մկրտիլ· ո՜վ յորդորէ։
Այսօր եկեալ Աստուած Որդին, ի Յորդանան խոնարհութեամբ ջրով մկրտիլ ի Յովհաննէ· ո՜վ յորդորէ։
Այսօր Մկրտիչն Յովհաննէս ի մկրտիլն հրաժարէր, թէ ինձ պարտ է ի քէն մկրտիլ· ո՜վ յորդ։
Այսօր գոչէր քաղցր ձայնիւ Աստուածորդին կարապետին, պարտ էր զօրէնսն կատարել· ո՜վ յորդորէ։

Այսօր բացեալ փակեալ երկինք, զոր յանցանօք փակեաց Ադամ և Հայր Որդի զնա կարդալով, ա՜յ յորդորէ:

Այսօր Հոգին աղաւնակերպ, իջեալ յերկնից ի Յորդանան, իւր փառակցին վկայելով. ա՜յ յորդորէ:

---

### Յերեկոյեան ժամուն խաղաղականն:

Շնորհեա՜ մեզ Տէր, ի գիշերի զերկնային զխաղաղութիւն քո. և պահեա զմեզ ի պատրանաց թշնամւոյն՝ ամենայաղթ զօրութեամբ սուրբ խաչի քոյ: Տէր Աստուած փրկութեան իմոյ ի տուէ կարդացի՝ և գիշերի առաջի քո: Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ: Եկեսցէ առ մեզ Տէր պահապան ի քէն, և պահեսցէ ըզմեզ յամենայն ժամ: Առաքեա ի մեզ Տէր ըզզօրութիւն սրբոյ խաչին որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ: Արժանի արա Տէր, զերեկս զայս խաղաղութեամբ, և առանց փորձութեան անցո զմեօք: Արժանաւորեա Տէր զգիշերս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց



պահելով զմեզ: Ընդ մեզ Տէր Աստուած՝ գիտասջիք հեթանոսք և պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է: Եւ լուարուք զայս ի ծագաց մինչև ի ծագս երկրի. զի՛՛: Եւ հզօրացեալքդ պարտեցարուք. զի՛՛: Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանայք՝ դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք. զի՛՛: Եւ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ Տէր. զի՛՛: Եւ զբանն զոր խօսիք՝ մի՛ մնասցէ առ ձեզ. զի՛՛: Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք, և ոչ խռովիցուք. զի՛՛: Եւ զՏէր Աստուած մեր փառաւոր արասցուք, և նա եղիցի մեզ յերկիւղ. զի՛՛: Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, և նա եղիցի մեզ ի սրբութիւն. զի՛՛: Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, և նա եղիցի մեզ ի փրկութիւն. զի՛՛: Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած. զի՛՛: Եւ ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ ետես զլոյս մեծ. զի՛՛: Եւ որ բնակեալդ էք ի խաւարի և ի ստուերս մահու լոյս ծագեսցի առ ձեզ. զի՛՛: Եւ քանզի մանուկ ծնաւ Որդի և տուաւ մեզ. զի՛՛: Եւ որոյ իշխանութիւն ի վերայ ուսոց իւրոց. զի՛՛: Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ. զի՛՛: Եւ սքանչելի խորհր-

դակից· զի՛ ։ Եւ Աստուած հզօր իշխան· զի՛՛ ։ Եւ իշխան խաղաղութեան հայր հանդերձելոյ յաւիտենին· Տէր Աստուած ընդ մեզ է։ Եւ փառք Հօր և Որդւոյ և հոգւոյն սրբոյ· այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն։

---

Նայեաց սիրով Հայրդ գթած ի քո ստեղծեալ գործս ձեռաց, և զբանակս հրեշտակաց տուր պահապան մեզ տկարացս· փրկեա զանձինս ի փորձանաց ի խաւարի շրջող դիւաց, զի ի տուընջեան և գիշերի տացուք քեզ փառս
անլռելի։

Էին անեղ անսկզբան ծնունդ անճառ Որդի և բան, որ արարեր զտիւ գործոյ և զգիշեր ի հանգիստ քնոյ· տուր ի ննջել աչաց մարմնոյ
արթուն լինել մեզ ըստ հոգւոյ· զի ի՛՛ ։

Բարուն հոգւոց բանաւորաց աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց, ի փակել դրանց բնութեանց մարմնոյ լոյս տուր աչաց սրտից մերոց· ի գիշերաց առ քեզ կանխել ընդ հրեղինացն
օրհնաբանել· զի ի՛՛ ։

Սուրբդ սրբոց Երրորդութիւն զմեզ մաքրեա քեզ բնակութիւն, շնորհեա ընդ մանկանցն



առագաստի հանգչել ընդ քեզ ի յանկողնի· տուր զհայցուած բարեկամին զփոխ երից
նկանակին· զի ի՛՛ ։

Երևելի լոյս ստեղծեր զտիւ և զգիշեր բաժանեցեր, ծագեա մեզ Տէր ի գիշերի զճառագայթս իմանալի· տուր յամենայն ժամանակի
զպահպանող աջ քո հովանի· զի ի՛՛ ։

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր բորբոքեսցի ի հոգիս մեր, զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ զլոյս գիտութեան քո փայլեսցէ· ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ զմիտս բոցով քո փա-
ռեսցէ· զի ի՛՛ ։

Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց ի զգայական ծածկեալ լուսոյ, որ վասն մեր եդար ի գբի և ննջեցեր ի տապանի· առ մեզ ննջեա՛ արթուն բնութիւն հերքեա զչարին ներգործութիւն·
զի ի՛՛ ։

Էիդ լուսոյ լուսոյ անստուերի պաղատանօք կամք առաջի, որ փակեալ դրամբք յերեկոյին երևեցար մետասանին· ընդ թովմայի առ քեզ գոչեմք, Տէր և Աստուած զքեզ դաւանեմք, էջ և առ մեզ յերեկոյիս և տուր զողջոյն քո
ի հոգիս։

Բամեալքս զքեզ Տէր աղաչեմք մեզ յօգնութիւն նայեա հայցեմք, պահապանդ Իսրայէլի անձանց մերոց լեր հովանի. օթեա առ մեզ խաղաղարար և ննջեսցուք անխռովաբար, զի ընդ առաւօտս կանխեսցուք օրհնել զքեզ ընդ Հօր Հոգւոյ:

Գոչման փողոյն Գաբրիէլի որ վերջնումն գիշերի, լսել արա զմեզ արժանի և աջակողմն օղեաց դասի. անշէջ վառեալ լոյս լապտերաց ըստ իմաստուն հինգ կուսանացն. զի ընդ փեսայիդ ի յառագաստ հարսունք հոգւոյ մտցուք ի փառս:

Հալածեա ի մէնջ Տէր նշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներևոյթ գազանն. և մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս:

Բարեխօսեա՛ վասն մեր Աստուածածին Մարիամ, որ ծնար զՏէր Աստուած որ հովուէրն զԻսրայէլ, ամենազօր սքանչելի փառօքն իւրովք:

---

ԳՅ. Ի քէն հայցեմք Հայր գթութեանց և Աստուած մխիթարութեանց, ի տխրական գիշերային մերձեալ ժամուս. մխի-



թարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց և շնորհեա զուրախութիւն գործովք արդարութեան. աղաչանօք սուրբ Աստուածածնին և ամենայն արդարոց:

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման, Որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք. թեթևացո ի ծանրութեանց մեղաց զանձինս, և զօրացո՛ բառնալ կամաւ զքաղցր լուծ քո պատուիրանաց. աղաչանօք:

Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս մարդասէր Հոգի Աստուծոյ. յորժամ նորոգես զերեսս երկրի, և վերստին ստանաս զոգիս մարդկան, նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալսն ի քէն սուրբ աւազանաւն. աղաչանօք:

Զկենդանագիր անարատ ծնողի քո, արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո, յորժամ գաս փառօք Հօր դատել զթշնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կու-

սի, աղաչեմք զքեզ տէր, պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ:

Հաղորդս արա և զմեզ Տէր, ընդ սրբոց քոց առաքելոցն, որք արժանի եղեն տեսանել զքեզ ի յարութեան քո, արժանաւորեա Տէր, տեսանել զքեզ ի միւսանգամ քո գալստեանն. օրհնութիւն առաքողին ի բարձունս:

Ի նստիլ քո յատենի դատաւոր ահեղ, աղաչանօք սուրբ Աստուածածնին, յիշեա զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառօք. քանզի քո են փառք յաւիտեանս ամէն:

---

Դպիրք և ալէլուք ծննդեան և յարութեան:

Պօղոսի Առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուած:

Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան: Որ խրատէ զմեզ զի ուրասցուք զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւն, զգաստութեամբ և արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի:



Եւ ակն կալցուք երանելոյ յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ յամենայն անօրէնութենէ և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական. նախանձաւոր գործոց բարութեան:

Զայդ խօսեա՛ց և մխիթարեա՛ և յանդիմանեա՛ ամենայն սաստիւ, զի մի ոք զքեզ արհամարհիցէ:

Ալէլուիա, ալէլուիա: Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո:

Ալէ: Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդին, որ է օծեալ Տէր ի քաղաքին Դաւթի, ի վայելչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Սղ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիոն և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց
առաջին թղթոյն է ընթերցուածս:

Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն իմ՝ որ աւետարանեցի ձեզ. զոր և ընկալարուք՝ որ և հաստատեալքդ էք:

Որով ապրեցայքն, որով բանիւ աւետարանեցի ձեզ՝ թէ ունիցիք, բայց եթէ ի զուր ոչ հաւատացիք:

Զի ես ձեզ նախ զայն աւանդեցի՝ զոր և ես ընկալայ թէև Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց:

Եւ զի թաղեցաւ, թէև յարեաւ յաւուրն երրորդի ըստ գրոց:

Եւ թէ երևեցաւ Կեփայի՝ և ապա մետասանիցն:

Ապա երևեցաւ աւելի ևս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն, յորոց բազումք կան մինչև ցայժմ և ոմանք ննջեցին:

Եւ ապա երևեցաւ Յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն:



հուսկ յետոյ քան զամենեսին իբրև անարգի միոջ՝ երևեցաւ և ինձ:

Զի ես իսկ եմ տրուպն առաքելոց, որ չեմ իսկ արժանի՝ թէ կոչեցայց առաքեալ, զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ:

Այլ շնորհօքն Աստուծոյ եմ՝ զինչ և իցեմ, և շնորհք նորա որք յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն, այլ առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցայ. և ոչ եթէ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ՝ որ ընդ իս:

Արդ՝ եթէ ես՝ և եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք, և դուք այսպէս հաւատացիք:

Ալէ: Սղ. յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա:

Սղ. Երանեալ է այր՝ որ ո՛չ գնաց ի խորհուրդս ամպարշտաց ի ճանապարհս մեղաւորաց նա ո՛չ եկաց, և յաթոռս ժանտից ո՛չ նստաւ:

Ընթերցուածս ի գործոց առաքելոց:

Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն՝ ասէ, և էր անդ բազմութիւն անուանց հարիւր և քսանից:

Ա՛րք եղբարք՝ պարտ է կատարիլ գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի, որ եղև առաջնորդ ունելեացն Յիսուսի:

Զի ի թիւս մեր էր՝ ընդ մեզ, և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ:

Սա ստացաւ գեօղ ի վարձուց անիրաւութեան. և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ՝ և հեղաւ ամենայն փոր նորա:

Եւ յայտնի եղև ամենեցուն՝ որք բնակեալ են յԵրուսաղէմ, մինչև կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց ակեղդամայ, այսինքն՝ գեօղ արեան:

Զի գրեալ է ի գիրս սաղմոսաց, եղիցի բնա-



կութիւն նոցա աւերակ. և մի՛ ոք իցէ՝ որ բնակիցէ ի նմա. և զկարգ նորա առցէ այլ:

Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի՝ յորում եմուտ և ել առ մեզ Տէր Յիսուս:

Սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչև յօրն՝ յորում վերացաւ ի մէնջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում՝ ի սոցանէ:

Եւ կացուցին երկուս, զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւ Յուստոս և զՄատաթիա:

Եւ կացեալ յաղօթս ասէին, դու Տէր, սրտագէտ ամենայնի, յայտնեա՛ զմի ոք՝ զոր ընտրեցեր ի սոցանէ յերկոցունց:

Առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ՝ և զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս՝ գընալ ի տեղի իւր:

Եւ ետուն վիճակս նոցա. և ել վիճակն Մատաթեայ. և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն:

Ալէ: Սղ. Գովեա Երուսաղէմ զՏէր:
Եւ օրհնեա զԱստուած քո սիոն:
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց,

Եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ։
Ո՛ եդ զսահմանս քո ի խաղաղութիւն.
Պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր,
Վաղվաղ ընթանան պատգամք նորա։
Դնէ զձիւն որպէս զասր,
Եւ զմէգ որպէս փոշի ցանեայ։
Արկանէ զսառն որպէս պատառս,
Առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա,
Շնչեսցէն հողմք և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր Յակոբայ,
Զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։
Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր,
Եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց
նոցա։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑԱՆԿ.

### Ձայնք ժամերգութեան։

Երես.

Ողորմեա՛ ինձ Աստուած . . . 1
Խորհուրդ խորին . . . . 4
Երգեցողութիւն Ս. Պատարագի . 4—35

### Ժամերգութիւն գիշերային։

Առաւօտ լուսոյ . . . . 35
Փառք ի բարձունս . . . 38
Եղիցի անուն տեառն . . 40
Նորաստեղծեալ . . . . 41

### Ժամերգ. յերեկոյի հերակոմուեց։

Խոնարհեցո . . . . . 43
Այրեցո . . . . . 45
Լոյս զուարթ . . . . 48
Սուրբ Աստուած (ըստ պատշաճի) . 49
Համբարձի . . . . . 51
Սուրբ ես Տէր զօրութեանց . . 52
Ի քէն հայցեմք . . . . 54
Աստ օրհնեցէք . . . . 55
Որ բնակեալ է . . . . . 57

Երգ՝ Ծննդեան և Մկրտութեան
Յիսուսի Քրիստոսի։

Այսօր տօնէ . . . . . 60
Խորհուրդ մեծ և . . . . 61
Ո՜վ զարմանալի . . . . 62
Այսօր ձայնն Հայրական . . . 63

Երեկոյ. ժամերգ. խաղաղականի։

Շնորհեա՛ մեզ Տէր . . . . 64
Նայեաց սիրով . . . . . 66
Ի քէն հայցեմք . . . . 68

Գէրք և աղերսք
Ծննդեան և Յարութեան։

Քանզի երևեցաւ . . . . 70
Ցուցանեմ ձեզ եղբարք . . . 72
Նա յաւուրսն յայնսիկ . . . 74
Գովեա Երուսաղէմ . . . . 75


## ՎՐԻՊԱԿՆԵՐ.

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 10 | 16 | Դպ. — ճաշու փոխն և շարականն ըստ պատշաճի։ | Դպ.—ճաշու փոխն և շարականն ըստ պատշաճի։ |
| 15 | 3 | (բաց թողած) | և միոյ Աստուածութեանն |
| 17 | 19 | խմբովին | (խմբովին) |
| 23 | 9 | հոտի | հօտի |
| 30 | 4 | Քրհնեա տէր | Օրհնեա՛ տէր |
| 30 | 25 | Քհ. | Սրկ. |
| 31 | 6 | անօգնական | լեր օգնական |
| 31 | 8 | (բաց թողած) | Սրկ.—Սուրբ և անմահ պատարագիս միջնորդութեամբ։ Դպ.—Ընկալ տէր և ողորմեա։ |
| 35 | 6 | յամենայն յամենայն ժամ ժամ | յամենայն ժամ, յամենայն ժամ |
| 38 | 4 | Ժթ. | (աւելորդ) |

870

870

<< Ազգային գրադարան >>

N 0032710